

Urupf Ausgabens
aufgezeichnet. in Kasse
Zahlungsbuch
1890



1999



195


ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ

Ս. ՅԱԿՈԲԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՑԻ

1890. ՏԱՐԻՈՑ ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ԼԵՆ
1058

43742-а. л.




0/28/85-621

1058-601

28. 1058

Ս. Յակոբայ Ազգային Անկեղանոցի Հոգաբարձութիւնը երջանիկ
կը համարի զինք, որ իւր 1890 լրացեալ տարւոյ հաշուեցոյցն ու
տեղեկագիրը հրատարակելովն՝ առիթ կ'ունենայ վերըստին նորոգե-
լու՝ Օգոստոսի տառն ինքնակալին ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. Կայսեր
Հայ-Կաթողիկէ հասարակութեանս Անկեղանոցին մէջ պատասխարեալ
բաղմաթիւ տառապելոց սրտազեղ շնորհակալիքն ու երախտագիտու-
թիւնը, Այդ մարդասիրական հաստատութեան յարկերուն ներքեւ
ապրող հարիւրաւոր տառապեալք, տնանկ այրիք, անկար և անօգնա-
կան ծերք, աղքատ պանդուխտք, որք և անտէր տղայք, որք կը պա-
տըսպարուին, կը դարմանուին, կը խնամուին և կը դաստիարակուին
անդ շնորհիւ Կայսերական առատաձեռն նպաստից, կը խոնարհին մեր
ամենեցուն Հայր, Տէր և Պաշտպան Վեհափառ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ ԻԻԼ
ՀԱՄԻՏ Բ. Կայսեր բարձր Գահոյից առջև, մատուցանելու համար ի-
րենց սրտաբուլիս իղձերն վասն երկարութեան իիւր թանկագին կենաց
և վասն լիուլի յաջողութեան ըլծիցն ու խորհրդոցը՝ որոյ զուգեալ է
համօրէն հպատակ ժողովրդոցը բաղին ու երջանկութիւնը՝

ՏԵՂԵԿԱԳԻՐ



ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ԵՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՐ

ԳԱՅԵՐԷՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Սուրբ Յակոբայ Անկելանոցի Հոգաբարձութիւնը կը փութայ մատուցանել Ձեր Սրբութեան, մեր Ազգային մարդասիրական հաստատութեան 1890 տարւոյ ելեւմտից հաշուեցոյցը, և սորա լուսաւորութեան համար պարտ կը համարի յաւելուլ հետեւեալ համառօտ տեղեկագիրը:

Նախ, Գերերջանիկ Հոգեւոր Տէր, ընդհանուր հասութից կողմէն սկսելով կը տեսնենք հոն 303,591 20 զրուշի բովանդակ գումար մը: յորմէ 10,908 զրուշ վաճառեալ տան մը դինը հանելով կը գտնեմք 292,683 20 զրուշի բովանդակ հասոյթ մը, որ կը ներկայացնէ Անկելանոցի կանոնաւոր և արտասովոր եկամուտն, որոյ 159,955 զրուշն անշարժ կալուածոց վարձքերն և մնացածը այլ և այլ հասոյթներէ գոյացած արդիւնքն են: Անդ մեծ ուրախութեամբ նշմարել կուտանք Ձատկի և Ծննդեան հանգանակութեանց, գանձանակաց և այլ և այլ բարերարաց նուէրներէն գոյացած հասոյթը՝ որոյ գումարը կը հասնի 38,401 30 զրուշի: Այս հասոյթը բաւական բարձր արժէք ունի մեր փոքրիկ հասարակութեան համար, որովհետեւ կը ցուցնէ որ մեր ժողովուրդը իւր վաղեմի մարդասիրական զգացումներն չէ մոռցած և իւրաքանչիւր ոք պատրաստ է միշտ, մին՝ իւր ոսկին, միւսն իւր լուամայն նուիրելու անդ՝ ուր ցաւ մը կայ սփոփելու, ուր՝ տնանկ այրիք, ուր՝ անտէր և անօգնական ծերք, ուր՝ տառապեալ պանդուխտք՝ կանօգնութեան կարօտ, ուր՝ որք և անխնամ տղայք կան կարօտ դատարարութեան: Այսու առթիւ Հոգաբարձութիւնս կը փութայ կրկին ևս իւր անբաւ շնորհակալութիւնքը մատուցանել այն ամէն բարերարաց՝ որք սիրով և ազնուաբար պատասխանեցին մեր կրկնակի հրաւիրանաց: Ձենք տարակուսիր բնաւ, որ այսուհետեւ եւս նոյն յօժար և մարդասիրական հոգին պիտի գտնենք ի նոսա՝ երբ հարկ ըլլայ

գիմել նոցա օժանդակութեանը: Մենք իբր պաշտօնեայ մեր խնամցը յանձնուած բազմութիւ կարօտելոց՝ ամենուն գթութիւնն ու ձեռնաու-
թիւնը հայցելու քաղցր պարտականութիւնն ստանձնած եմք, կը խնդրեմք և կը փափաքեմք որ անոնք ալ յօժար կամք և առատաձեռ-
նութեամբ մեր հայցուածոցը պատասխանելու քաղցր պարտականու-
թիւնն ստանձնեն, որով մեծապէս նպաստած կ'ըլլանք Անկելանոցիս բարեօրմանն ու յառաջագիմութեանը, որ է միակ ապաստանարան հարկւրաւոր թշուառաց և կարօտելոց, Հոս հարկ է նաեւ որ ամբաւ շնորհակալութիւն յայտնենք մեր պատուարժան նախորդ Հոգաբարձութեանց, որոց անդուլ ջանից, անթիւ զոհողութեանց և խոհական անտեսութեան շնորհիւ կրցած է Անկելանոցս այն լաւագոյն և հաս-
տատուն դիրքն ստանալ յորմէ մեծապէս կ'օգտի մեր այժմեան Հո-
գաբարձութիւնն:

Անցնելով ծախուց կողմը, կը պարտիմք յիշել տալ որ մեր Ազ-
գային Անկելանոցը վեց գլխաւոր բաժանումն կը բովանդակէ,
այսինքն

1. ՀԱՆՁՆԱԾՆՈՑ	Սրահ հասարակաց, արանց	Անկողինք	15
	Սենեակք արանց, 13	»	13
2. ԾԵՐԱՆՈՑ	Սրահ հասարակաց, կանանց	»	6
	Սենեակք կանանց, 8	»	8
3. ԾԵՐԱՆՈՑ	Արանց	»	19
	Կանանց	»	13
4. ԾԵՐԱՆՈՑ	Արանց և մի խրճիթ	»	28
	Կանանց և երկու խրճիթք	»	15
Բովանդակ անկողինք			117
5. ՄԱՏՈՒՈՆ			
6. ԱՂԲԱՏԱՆՈՑ			
7. ԴՊՐՈՅ			

Առաջին երեք բաժանմանց մէջ միջին հաշուով օր ըստ օրէ 105 հո-
գի պատասպարուեցան, որոց աննդեան, ջեռուցման, լուսաւորման և
լուացման համար 78263, 20 զրուշ ծախք եղած է, ինչպէս կը տես-
նուի ծախուց առաջին ութ յօդուածոց գումարէն՝ յորմէ պէտք է հա-
նել տարւոյս վերջը 8561 զրուշի աւելցած պարէնը: Ծախուց այս գու-
մարին մէջ պէտք չէ ենթադրել Բարերարաց կողմանէ Անկելանոցիս ե-
ղած աննդեան և զգեստաւորման վերաբերեալ նիւթական նուէրներն
(շուրջ 50) ոսկի արժէք ունեցող) զորս ամիսը անգամ մը հրատարակե-
լու սովորութիւնն ունի Հոգաբարձութիւնս օրագրաց միջոցաւ Յիշեալ
105 հոգւոյ պատասպարեալներէն զատ՝ Հոգաբարձութիւնս հարկ դա-
ն

թած է կարօտելոց ոմանց կէսօրուան կերակուրը և չքաւոր ու անտէր ընտանեաց ոմանց հանապազօրեայ հացը տալ, Հոգաբարձութիւնս կարող եղաւ, ըստ փափագի մեծաբոյ Վարչական ժողովոյ, Անկեղանոցի կէս օրուան ճաշուն ալ ջերմ կերակուրի ուժիկը շարունակել, որ բաւական կը բարձրացնէ հանապազօրեայ ծախքը: Ուրիշ հաշուով մը, օր ըստ օրէ 105 անձինք՝ տարւոյս մէջ 76650 ջերմ կերակրոյ ուժիկ ընդունելով, միայնդամայն զգեստաւորուած, ջերմացած, լուսաւորուած և մաքրուած են 78263 20 զրուով:

Տարւոյս մէջ նորեկ հիւանդաց, յիմարաց և անկար ծերոց չըմանը եղած է 234, Յատկապէս հիւանդաց բնակութեան օրերուն թիւը կը հասնի 6167 ի, որոնց համար 3164 զրուշի դեղ և վիրարութեան պիտոյք տրուած են, առանց ի հաշիւ դնելու ամէն օր բժշկի ձրի խորհրդակցութեան եկող հիւանդաց շնորհուած դեղօրայքն որոց դեղագրոց թիւն կը հասնի շուրջ 988 ի:

Մահկանացութեան թիւը կը գտնենք 14,7 % որ յոյժ աւելի ստորին կ'ըլլար, եթէ մեր հիւանդք մեծաւ մասամբ երկարատեւ հիւանդութեամբ կամ ծերութեամբ հիւժեալ և շատ անգամ ոգեսպառ չներկանային հիւանդանոց, ուր ոմանք 24 ժամ հազիւ կ'ապրին: Բնակութեան օրերուն թիւն ալ շատ բարձր է, այն պատճառաւ որ երկարատեւ խօթութեանց ենթակայ ակտիւ տաճար, անդամաւորք, հիւժեական թոքախտով վարակեալք կուգան ամիսներով կը պառկին:

Կարասեաց կարգին մէջ կը տեսնուի 9258, 30 զրուշի գումար մը, այս թերեւս չափազանց երեւնայ, սակայն պէտք է դիտել որ թոշակաւոր հիւանդաց համար 9 նոր սենեակք շինուած ըլլալով՝ պէտք էր գտնուէր կահիւք և կարասեօք յարգարել, որահաց մէջ վաւարտներ հաստատուել են:

12798 զրուշ ներքին նորոգութեանց համար ծախք են, որ նոյնպէս մէկ կողմանէ առողջապահական անհրաժեշտ օրինաց հնազանդելու և միւս կողմանէ Անկեղանոցի հաստութից նոր աղբիւր մը բանալու համար եղած են: Այսպէս նոր առանձինն սենեկաց շինութիւնն 15 հազար զրուշէն աւելի գումար մը հայթայթած է: Ինչպէս կը տեսնուի հաստութից մէջ ի յօդուածն պատասխարելոց:

Անկեղանոցի մատուռն 1810 10 զրուշի ծախք մը կը ցուցնէ. յորմէ եթէ հանուի մատրան գանձանակէն առնուած 974 զրուշը և յուղարկաւորութիւններէ գոյացած 1102 10 զրուշի հասոյթը, մատրան տարեկան զուտ ծախքը կ'ըլլայ 2743 զրուշ:

33,017 20 զրուշ պաշտօնէից տնտեսանք՝ շատ մեծ խնայութիւն մը նշմարել կուտան: Այս գումարով կը վճարուին 16 պաշտօնեայք, պիսինքն, բժիշկ, 1 դեղագործ, 1 գրագիր, 1 փայտկարար, 2 հիւանդ

դապահ արք, 1 հիւանդապահ կին, 1 յիմարապահ այր, 1 յիմարապահ կին, 1 վերակացու անկար ծերոց, 1 վերակացու կին՝ անկար պառաւանց, 1 սափրիչ, 1 խօհարար, 2 դռնապան՝ Անկեղանոցի և Աղբատանոցի և 1 ջրպետ: Միջին հաշուով իւրաքանչիւր պաշտօնեայ 172 զրուշ 5 փարա ամսական ընդունել է: Կը կարծենք որ ի մօտոյ ըստ բազմութեան պատասխարելոց՝ պաշտօնէից ոմանց թիւը պէտք պիտի ըլլայ աւելցնել:

Անկեղանոցի յարակից Աղբատանոցին բարեկարգութեան համար՝ Հոգաբարձութիւնս որչափ հնար էր աշխատեցաւ: Տեղւոյն խաղաղութիւնն խռովող և կարողութեան տէր եղող ընտանիքներն հեռացուց անտի, և անոնց տեղ ամէնէն առաւել կարեկցութեան արժանի աղքատ ընտանիքներն հաստատեց հոն: Զատիկ և Ծննդեան առթիւ աղքատաց բաժնուած 8890 զրուշի ուտեստին մէկ մասն այս տեղւոյս բընակաց մատակարարեց և չէնքերուն քանի մը մասանց անհրաժեշտ պէտք եղած նորոգութիւնքը գործադրեց:

Աղբատանոցի չէնքը կը պարունակէ մեծ ու փոքր 57 սենեակ, ուր կը պատասխարին նոյնչափ թուով ընտանիք շուրջ 200 անձինք: Աղբատանոցի պատասխարեալք առ հասարակ գաւառացի և Պօլսեցի այրի կնայք, անկար ծերք, որք տղայք և աղքատ պանդուխտներ են: Ասոնց մէջէն առաւել կարօտեալք ոմանք կ'ընդունին Հոգաբարձութեան ուժիկի հաց: Բժիշկ և դեղք ձրիապէս կը շնորհուին նոցա, ինչպէս նաև ձրիապէս կը կատարուին այս տեղւոյս բնակաց ննջեցելոց յուղարկաւորութիւնքն:

Վերջապէս Հոգաբարձութիւնս հաճութեամբ դիտել կուտայ որ այս մարդասիրական հաստատութեան հաշուեցոյցին մէջ բաւական մեծ գումար մը 52511 10 զրուշի յատկացեալ է աղքատ տղայոց դաստիարակութեան: Այս գումարին մեծ մասը, 23,804 20 զրուշ յանձնուած է Ս. Դրիգոր Լուսաւորիչ Բազմաբանի Խնամակալութեան, վասն բարձրագոյն դաստիարակութեան 25 օժտաւոր աղքատ աշակերտաց, ըստ հրիտակի Վսեմապատիւ Ազարեան Արիստակէս էֆէնտիի, փոխարէն վարձուց Անկեղանոցի գետնին վրայ կառուցեալ 6 քարաշէն տանց՝ որոց շինութեան ծախքը առատասիրտ բարերարն տուած է, զուտ հաստութին մէկ երրորդն Անկեղանոցի ընդհանուր ծախուց յատկացեալ ըլլալով:

20891 30 զրուշը Անկեղանոցի ձրիավար Դպրոցին դասատուաց և դրական ծախուց կը վերաբերի: Դպրոցս ունի 3 ներքին և երկու այցելու դասատուներ: Աշակերտք են թուով 70. Դպրոցս կրնայ մինչև 100 աշակերտ ընդունիլ: Աշակերտք կ'ուսանին Հայերէն, Տաճկերէն, Դաղդիերէն լեզուները և Գիտութեանց սկզբունքն: Դպրոցական պիտ

տոյք ձրի կը տրուին աշակերտաց, բայց ի սակաւութիւն մանկանց՝ որոց ծնօղքն կրնան դոյզն վճարմունք մ'ընել։ Եթէ յանուն Դպրոցի եղած եկամուտներն ընդարձակին շնորհիւ առատասիրտ բարերարաց, Հոգաբարձութիւնս մտադիր է Որբանոց և Արուեստանոց մը հաստատել՝ որոց անհրաժեշտ պէտք ունի հասարակութիւնս։ Հիւանդք, յիմարք, ծերք և աղքատք առ հասարակ կը խնամուին Անկեղանոցի յարկերուն ներքեւ։ մինչդեռ որք և անտէր տղայք, որք անտարակոյս շատ աւելի հոգացողութեան պէտք ունին՝ անխնամ թողուած են։ Ոչ նուազ կարեւորութիւն ունի Արուեստանոցի մը հաստատութիւնն ալ, քանզի մեր բազմութիւն տղայք անարուեստ մնալով, դատապարտուած են դատարկաշըջիկ լինիլ, և դահալէժ դիմել միշտ յաղքատութիւն և ի թշուառութիւն։

7815 զրուշ գումար մը կը տրուի մասամբ դարձեալ Ս. Դրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանի, մասամբ Ս. Յովհան Ոսկեբերան Եկեղեցւոյ դպրոցին ի նպաստ ձրեալարժ աշակերտաց, և մասամբ Թրիէստէի և Վիէննայի երկու և Բարիզու երկու Ուսանողաց։ Ս. յն. 7815 զրուշի գումարը տրուեցաւ, ըստ որոշողութեան Վարչական Ժողովոյ, Արքունական շնորհեալ հացի և մսոյ ուճկի այն մասէն՝ որ կը տրուի յանուն Դատարակութեան աղքատ մանկանց հասարակութեանս։

Այս է ահա, Դերերջանիկ Հոգեւոր Տէր, մեր Վարչութեան տարեկան դուրսաբերայ արդիւնքն։ Հոգաբարձութիւնս կը փափաքէր շատ առաւել փայլուն և արդասաւէտ տեղեկութիւն մը մատուցանել Ձեր Սրբութեան, սակայն մեզ յանձնուած միջոցք չէին թոյլ տար այս փափաքը լիովին դորձադրել։ Դիւաւորաբար տեղական հանգամանք մեծամեծ անպատեհութիւններ կը ծնուցանեն որոց այսօր դարման տանել անհնար է։ Յուսալից ենք որ Ձեր Սրբութիւնը և Ազգային վարչութիւնը պիտի հայթայթեն միջոցները՝ որովք մեր Անկեղանոցն ալ կարենայ մրցիլ բարօրութեամբ համանուն օտար մարդասիրական հաստատութեանց հետ։

1891 տարւոյս նախատեսեալ հաշուեցուցին աւելի Հոգաբարձութիւնս պիտի փութայ ներկայացնել Ձեր Սրբութեան իւր կարծիքը՝ նրկատմամբ քանի մը անհրաժեշտ նորոգութեանց ի բարւոքումն դիւաւորաբար կանանց յատկացեալ մասանց։

Հոգաբարձութիւն Ս. Յակոբայ Ազգային Անկեղանոցի

ԱՅՆԱՐԿՈՐ

ԱՅՆԱՐԿՈՐ

Բաղնարաւ Վ. Սահակեան

Մ. Մարգարեան

Բանկալթի, 29 Մարտ 1891

8/10/54



